

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Հոդվածը ստացվել է՝ 09.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 07.04.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

ԱՐՇԱԿ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Ներածություն: Դրամական փոխանցումները վերաբերում են ոչ միայն երկրի ներսում, այլ նաև երկրի սահմաններից դուրս և հակառակ ուղղությամբ փոխանցումների իրականացմանը: Այն երկրները, որոնց քաղաքացիները արտագնա աշխատանքների ու էմիգրացիոն մեծ հոսքերի մեջ են գտնվում, արտերկրից դրամական ներհոսքերը առավել դինամիկ ու մեծածավալ են, ինչն առաջացնում է ոչ միայն փողի զանգվածի փոփոխություն, այլ նաև արտարժույթային և դրամավարկային քաղաքականությունների փոփոխություն:

Հայաստանում, մինչև 2025 թվականը արտերկրից ստացված տրանսֆերների մասով ֆիզիկական անձանց մոտ հարկային հետևանքներ չէր առաջանում, սակայն ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման ինստիտուտի ներդրումն ու հսկողությունն ինքնին ստեղծում են դրամական ներհոսքերի հետևանքների համար ֆիսկալ քաղաքականության փոփոխություն՝ կապված և՛ վերահսկողական, և՛ հարկերի ծավալների, և՛ տնտեսության մեջ հարկերի հավաքագրման ու հետևանքների հետ:

Անկանխիկ եղանակով վճարումների իրականացումը խրախուսվում է զարգացած երկրներում, ինչով պայմանավորված պետության մեջ փողը վերահսկողները հնարավորություն են ունենում իրականացնել փողի ռացիոնալ կառավարում և դիվերսիֆիկացիա, որոնցով պայմանավորված հնարավորություն է լինում արագ արձագանքել ռիսկերին ու գնահատել ապագա սպասումները:

Այս համատեքստում կարող ենք թեման որակել **արդիական**, հակապես վերը նշված նոր ազդեցությունների առկայության պարագայում, հաշվի առնելով, որ երկրի ներսում դրամական փոխանցումների մասով ուսումնասիրություններ են իրականացնում և՛ ՀՀ Կենտրոնական բանկը, և՛ ՀՀ Վիճակագրական կոմիտեն:

Գրականության վերլուծություն: Գրականության վերլուծությունը հիմնված է Միջազգային հրապարակումների հիման վրա: Մասնավորապես, այդ հրապարակումներից գիտական են՝ Azqueta A., Hirschbuehl, D., Onorante, L.-ի and Saiz L.-ը ուսումնասիրությունը Տնտեսական քաղաքականության անորոշության աղբյուրները Եվրոյի գոտում¹, Dietmar Meyer-ի և Adela Shera-ը աշխարհում

¹ Azqueta A., Hirschbuehl, D., Onorante, L. and Saiz L., 2023, Sources of Economic Policy Uncertainty in the euro area, european economic review, page 152, <https://doi.org/10.1016/j.euroecorev.2023.104373> (Last entered: 08.03.2025)

իրականացվող տրանսֆերտների², Malik Muhammad-ի և Junaid Ahmed-ը դրամական փոխանցումները ֆինանսական ներհոսքերի ապահովման ամենամեծ ու կարևորագույն աղբյուրներ ³, Adela Shera-ի և Dietmar Meyer-ը հիմնականում տրանսֆերտների տվյալ երկին⁴, Murshed Chowdhury-ի և Financial Development-ը 1979-2011թթ. ընթացքում 33 երկրների տրանսֆերտները⁵, Hrushikesh Mallick-ը մակրոտնտեսական գործունեության վրա (մասնավոր սպառում և ներդրումներ) և դրա ազդեցությունը Հնդկաստանի տնտեսական աճի վրա 1966-67-ից մինչև 2003-2004 թվականներն ընկած ժամանակահատվածում տրանսֆերտների ազդեցությունը ⁶ և Nicholas P. Glytsos-ը դրամական փոխանցումների էկզոգեն ցնցումների ազդեցությունը միջերկրածովյան երկրներում սպառման, ներդրումների, ներմուծման և արտադրանքի վրա⁷ և հարցերը:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ ԿԲ և ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված վիճակագրական հաշվետվություններն ու ժամանակային շարքերը, ՀՀ գործող օրենսդրական ակտերն ու նորմերը, ինտերնետային կայքերը, հայրենական ու արտասահմանյան հեղինակների աշխատություններն ու հոդվածները և այլն: Հետազոտության ընթացքում օգտագործվել են վիճակագրական, աղյուսակային, հաշվարկային, համեմատական, համակարգչային վերլուծությունների և այլ գործիքակազմեր:

Վերլուծություն: Որքան էլ աշխարհը գնում է թվայնացման ու թվային արժույթի կիրառման (էլեկտրոնային փող, բիտքոյին, էթերիում և այլն), այնուամենայնիվ փողի կառավարումը միշտ մնում է հայեցակարգային հիմնախնդիր: Եթե ընդհանուր փողի վերաբերյալ հետազոտություններ ու գնահատումներ իրականացնելիս, կանխիկ ու անկանխիկ փողերը պետք է

² Dietmar Meyer & Adela Shera, 2017, The impact of remittances on economic growth: An econometric model, *Economia*, Volume 18, Issue 2, May–August Pages 147-155, <https://doi.org/10.1016/j.econ.2016.06.001> (Last entered: 08.03.2025)

³ Malik Muhammad & Junaid Ahmed, 2009 Dynamic Impact of Remittances on Economic Growth: A Case Study of Pakistan, *Forman Journal of Economic Studies*, Vol. 5, (January–December) pp. 59-74, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2037783 (Last entered: 08.03.2025)

⁴ Adela Shera & Dietmar Meyer, (2013), Remittances and their impact on Economic Growth, *Periodica Polytechnica Social and Management Sciences*, Vol. 21 No. 1 <https://doi.org/10.3311/PPso.2152> (Last entered: 08.03.2025)

⁵ Murshed Chowdhury, Financial Development, 2016, Remittances and Economic Growth: Evidence Using a Dynamic Panel Estimation, *The Journal of Applied Economic Research*, Volume 10, Issue 1, February Pages 35-54, <https://doi.org/10.1177/0973801015612666> (Last entered: 08.03.2025)

⁶ Hrushikesh Mallick, 2008, Do remittances impact the economy? : some empirical evidences from a developing economy, *Centre for Development Studies*, Pages 54, https://opendocs.ids.ac.uk/articles/report/Do_remittances_impact_the_economy_some_empirical_evidences_from_a_developing_economy/26442640?file=48090625 (Last entered: 08.03.2025)

⁷ Nicholas P. Glytsos. "The contribution of remittances to growth: A dynamic approach and empirical analysis", *Journal of Economic Studies*, Vol. 32 No. 6, pp. 468-496. <https://doi.org/10.1108/01443580510631379> (last entered: 08.03.2025)

դիտարկել կոմբինացված կերպով, ապա դրամական փոխանցումներում առավել հատկանշական է անկանխիկ փողերը՝ անկախ կիրառման միջավայրից: Այսօր աշխարհի տարբեր երկրներում փողի սպառման և/կամ փոխանցման համար ստեղծվում են տարբեր կիրառության միջավայրեր, որոնք փոխարինում են ավանդական դարձած եղանակներին: Օրինակ, դրամական փոխանցումները դրամապանակներով, քարտերով, բանկային փոխանցումներով (SWIFT, ACH, Wire և այլն) կամ միջազգային վճարահաշվարկային համակարգերով կարելի է արդեն որակել որպես ավանդական միջոցներ: Այնուամենայնիվ, դրամական փոխանցումները դրամական ներհոսքերի տեսքով դինամիկ կերպով զարգանում է այն երկրներում, որտեղ մեծ է աշխատուժի արտահանումը, միջազգային շուկաների հետ համագործակցությունը՝ արտահանման համատեքստում, թվային տեխնոլոգիաների միջոցով փողի կառավարման ռացիոնալացումը և/կամ դիվերսիֆիկացիան:

Տարբեր գիտնականների և միջազգային կառույցների կողմից ուսումնասիրության առանցքում են գտնվում ինչպես կանխիկ այնպես էլ անկանխիկ փողերը, որոնք անմիջական ազդեցություն են ունենում երկրի փողի զանգվածի վրա, հանգեցնելով տվյալ երկրի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների փոփոխությանը: Մակայն, փողի կառավարումը միայն դրամավարկային քաղաքականության հիմնախնդիր չէ, այլ նաև վերջինիս կառավարման ընթացքում արժույթային, մակրոպրոդյուցիալ և ֆիսկալ քաղաքականություններ զուգահեռաբար կատարվող փոփոխությունները: Ի՞նչու: Կառավարման արտապատկերումը վերջինս նշված քաղաքականությունների վրա կատարվում է այն պատճառով, քանի որ դրամական փոխանցումների մեծ ներհոսքը բնակչության մոտ բերում է հավելյալ դրամական միջոցներով ապահովածության, ինչը հանգեցնում է սպառողական ապրանքների սպառման բարձրացմանը: Այս համատեքստում փոխվում է տնտեսությունում առաջարկի ու պահանջարկի համամասնությունը, իսկ դրամավարկային քաղաքականության վրա՝ գների փոփոխությանը, կամ փողի գնի ճշգրտմանը:

Ուստի դրամական կամ փողային փոխանցումների հատկապես ներհոսքերի մասով ուսումնասիրություններ կատարելու համար դիտարկել ենք ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ցուցանիշները: Մասնավորապես, Հայաստանի Կենտրոնական բանկը հրապարակում է եռամսյակային և տարեկան ցուցանիշներով «Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի» վիճակագրական հաշվետվությունը, որում տարանջատված ներկայացնում է դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի հետևյալ կարևոր հոդվածները.

1. Աշխատողների զուտ աշխատավարձ,
2. Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ,
3. Անձնական տրանսֆերտներ,

4. Կապիտալ տրանսֆերտներ:

Նշվածները մեկնաբանվում են հետևյալ կերպ. Չուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների: Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ-ում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը; արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ; Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա և 2023 թվականին վերանայվել են արտերկրից ստացված Աշխատողների վարձատրություն և Անձնական տրանսֆերտներ հոդվածները՝ պայմանավորված «ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրից ստացված դրամական փոխանցումների վերաբերյալ» ընտրանքային հետազոտության արդյունքում ստացված նոր կշիռներով: ՀՀ ԿԲ հրապարակած ցուցանիշների հիման վրա կազմել են «Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի» շարքը(տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Դեպի Հայաստան անձնական դրամական փոխանցումներն ըստ
վճարային հաշվեկշռի⁸

մլն. ԱՄՆ դոլար

Անվանում	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Աշխատողների զուտ աշխատավարձ	339	457	675	814	636	768	769	817	939	892
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ	-	-	-	-	-	-	153	163	187	178

⁸ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, Վիճակագրություն և հաշվետվություններ, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (Վերջին մուտք 05.03.2024թ.)

Անձնական տրանսֆերտներ	460	561	756	837	602	661	790	844	964	910
Կապիտալ տրանսֆերտներ	47	60	60	130	48	55	50	85	69	47
Դրամական փոխանցումներ ՀՀ	846	1,078	1,491	1,781	1,286	1,484	1,762	1,909	2,160	2,026


Անվանում	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Աշխատողների զուտ աշխատավարձ	638	587	653	625	643	286	310	670	457	361
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ	127	117	130	125	128	57	62	134	91	72
Անձնական տրանսֆերտներ	649	609	681	666	682	940	1,140	1,151	845	647
Կապիտալ տրանսֆերտներ	16	17	31	37	36	28	48	51	17	9
Դրամական փոխանցումներ ՀՀ	1,430	1,330	1,494	1,452	1,490	1,312	1,559	2,005	1,411	1,089

Աղյուսակ 1 ցուցանիշներով երևում է, որ 20 Տարվա կտրվածքով աճը կազմել է 243 մլն ԱՄՆ դոլար կամ 22.3%: Մակայն հաշվի առնելով, որ 20 տարվա ժամանակային շարքում տարբեր տնտեսական ու աշխարհաքաղաքական ազդեցություններ են տեղի ունենում, ժամանակային շարքի վարքում փոփոխությունները դիտարկել են յուրաքանչյուր 5 տարիների շեղման համատեքստում:

Դեպի Հայաստան անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի 5 տարի ժամանակային շեղմամբ⁹

մլն. ԱՄՆ դոլար


Անվանում	1-ին 5տարի	2-ին 5տարի	3-ին 5տարի	4-ին 5տարի
Աշխատողների զուտ աշխատավարձ	297	123	(249)	75
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ	-	178	(50)	15
Անձնական տրանսֆերտներ	142	249	(228)	(293)
Կապիտալ տրանսֆերտներ	1	(8)	(10)	(19)
Դրամական փոխանցումներ ՀՀ	440	542	(536)	(222)



Գծապատկեր 1 Դեպի Հայաստան անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի 5 տարի ժամանակային շեղմամբ¹⁰

⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, Վիճակագրություն և հաշվետվություններ, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (Վերջին մուտք 05.03.2024թ.)

¹⁰ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Աղյուսակ 2-ի ցուցանիշներով:



Գծապատկեր 2 Դեպի Հայաստան անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի 5 տարի ժամանակային շեղմամբ՝ տոկոսային արտահայտմամբ¹⁰:

Գծապատկերի 2-ի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ վերջին տաս տարիների ընթացքում հինգ տարվա ժամանակային ընդհատմամբ դինամիկան 31 և 13 տոկոսային կետով նվազել է: Փոփոխությունները կարճաժամկետ հատվածում ավելի տեսանելի են, քան՝ երկարաժամկետ:

Հասկանալու համար, թե փողային փոխանցումների դինամիկան նվազել է ի հաշիվ արտագնա աշխատանքների նվազմամբ դիտարկենք աղյուսակ 1-ի «Աշխատողների զուտ աշխատավարձ» և «Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ» հոդվածների դինամիկան, որից երևում է, որ 2024թ. ցուցանիշը մոտեցել է 2005թ. ցուցանիշին: Այսինքն, դրամական ներհոսքերը հետընթաց են ապրել այս երկու հոդվածների մասով : Աշխարհաքաղաքական խնդիրների ազդեցությունը տնտեսության վրա հիմնավորվում է նաև Եվրոպական կենտրոնական բանկի «Տնտեսական քաղաքականության անորոշության աղբյուրները եվրոյի գոտում» փաստաթղթում: Նշվում է, որ «ընդհանուր տնտեսական քաղաքականության անորոշությունը կառուցված է այնպիսի տարբեր բաղադրիչների համախմբման միջոցով, ինչպիսիք են հարկաբյուջետային քաղաքականությունը, դրամավարկային քաղաքականությունը և աշխարհաքաղաքական խնդիրները»¹¹

Հասկանալու համար, թե դրամական փոխանցումները արդյո՞ք ուղղակիորեն են ազդելու ՀՀ տնտեսության վրա, կազմել է Աղյուսակ 3-ը, որի հիման վրա կառուցվել է դրամական փոխանցումների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա Գծապատկեր 3 ռեգրեսիոն աղյուսակը:

¹¹Azqueta A.and others, 2023, Sources of Economic Policy Uncertainty in the euro area, <https://doi.org/10.1016/j.eurocorev.20> 23.104373 (Last entered: 08.03.2025)

ՀՀ փոխանցված գումարները, ըստ տարիների և ՀՆԱ ժամանակային շարքը¹²

Տարի	ՀՆԱ	Դրամական փոխ. ՀՀ	Տարի	ՀՆԱ	Դրամական փոխ. ՀՀ
2005	2,242,881	846	2015	5,043,633	1,430
2006	2,656,190	1,078	2016	5,067,294	1,330
2007	3,149,283	1,491	2017	5,564,493	1,494
2008	3,568,228	1,781	2018	6,017,035	1,452
2009	3,141,651	1,286	2019	6,543,322	1,490
2010	3,460,203	1,484	2020	6,181,903	1,312
2011	3,777,946	1,762	2021	6,991,778	1,559
2012	4,266,461	1,909	2022	8,501,449	2,005
2013	4,555,638	2,160	2023	9,453,175	1,411
2014	4,828,626	2,026	2024	10,127,166	1,089

Regression Statistics						
Multiple R	0.056615393					
R Square	0.003205303					
Adjusted R Square	-0.05217218					
Standard Error	2267150.705					
Observations	20					
ANOVA						
	df	SS	MS	F	Significance F	
Regression	1	2.97507E+11	2.97507E+11	0.057880975	0.812595907	
Residual	18	9.25195E+13	5.13997E+12			
Total	19	9.2817E+13				
	Coefficients	Standard Error	t Stat	P-value	Lower 95%	Upper 95%
Intercept	4695257.397	2388972.183	1.965388057	0.064992162	-323786.9156	9714301.71
X Variable 1	369.570884	1536.13658	0.240584652	0.812595907	-2857.732314	3596.874082

Գծապատկեր 3 ՀՆԱ և դրամական փոխանցումների ժամանակային շարքն Աղյուսակ 3-ի ցուցանիշների ռեգրեսիոն արդյունքը¹³

Գծապատկեր 3-ի ռեգրեսիոն ցույց է տալիս, որ ցուցանիշների, այսինքն ՀՆԱ-ի ու դրամական փոխանցումների միջև կապը շատ թույլ է՝ 0.003 գործակից: Եվ քանի որ հայտնի է, որ էկոնոմետրիկական այն վերլուծական գործիքներից է, որը թույլ է տալիս բացահայտել տարբեր չափողականություն, մեծություն ունեցող երևույթների միջև

¹² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Աղյուսակ 2-ի ցուցանիշներով և ՀՀ ՎԳ, Վիճակագրություն, Վիճակագրական ցուցանիշներ, <https://armstat.am/am/?nid=12&id=01510&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC> (վերջին մուտք՝ 19.04.2025թ.)

¹³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից աղյուսակ 2-ի ցուցանիշներով:

եղած կապը, կարող ենք մեկնաբանել, որ նույն չափողականություն ունեցող երևույթների դեպքում նաև այս ազդեցությունը էական չէ:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքում եզրահանգվել է, որ Հայաստանի փողային փոխանցումները, չնայած 2005 թվականի ու 2024 թվականի ցուցանիշների միջև գրանցվել է դրական դինամիկա, սակայն վերջին տասն տարիներին հինգ տարվա պարբերականությամբ նվազել է: Նշվածով պայմանավորված կարելի է ասել, որ դրա պատճառներից է աշխարհաքաղաքական խնդիրները, տարածաշրջանային հակամարտությունները և միջազգային վճարային գործիքների տարածվածությունը: Վերլուծության արդյունքում հողվածում որպես նորույթ է դիտված Հայաստանում «Բաց Բանկի» և «Բաց Ֆինանսների» կիրառումը նորագույն տեխնոլոգիաներով դրամական կամ փողային փոխակերպումներով վճարումների կատարումը՝ Ethereum, Bitcoin և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն և հաշվետվություններ, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:
2. Azqueta A., Hirschbuehl, D., Onorante, L. and Saiz L., 2023, Sources of Economic Policy Uncertainty in the euro area, *European economic review*, page 152, <https://doi.org/10.1016/j.eurocorev.2023.104373>
3. Dietmar Meyer & Adela Shera, 2017, The impact of remittances on economic growth: An econometric model, *Economia*, Volume 18, Issue 2, May–August Pages 147-155, <https://doi.org/10.1016/j.econ.2016.06.001>
4. Malik Muhammad & Junaid Ahmed, 2009 Dynamic Impact of Remittances on Economic Growth: A Case Study of Pakistan, *Forman Journal of Economic Studies*, Vol. 5, (January–December) pp. 59-74, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2037783
5. Adela Shera & Dietmar Meyer, (2013), Remittances and their impact on Economic Growth, *Periodica Polytechnica Social and Management Sciences*, Vol. 21 No. 1 <https://doi.org/10.3311/PPso.2152>
6. Murshed Chowdhury, Financial Development, 2016, Remittances and Economic Growth: Evidence Using a Dynamic Panel Estimation, *The Journal of Applied Economic Research*, Volume 10, Issue 1, February Pages 35-54, <https://doi.org/10.1177/0973801015612666>
7. Hrushikesh Mallick, Do remittances impact the economy? : some empirical evidences from a developing economy, *Centre for Development Studies*, 2008, Pages 54, https://opendocs.ids.ac.uk/articles/report/Do_remittances_impact_the_economy_some_empirical_evidences_from_a_developing_economy/26442640?file=48090625
8. Nicholas P. Glytsos. "The contribution of remittances to growth: A dynamic approach and empirical analysis", *Journal of Economic Studies*, Vol. 32 No. 6, pp. 468-496. <https://doi.org/10.1108/01443580510631379>

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

ԱՐՇԱԿ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Համառոտագիր

Դրամական փոխանցումները վերաբերում են ոչ միայն երկրի ներսում, այլ նաև երկրի սահմաններից դուրս և հակառակ ուղղությամբ փոխանցումների իրականացմանը: Այն երկրները, որոնց քաղաքացիները արտագնա աշխատանքների ու էմիգրացիոն մեծ հոսքերի մեջ են գտնվում, այդ երկրների արտերկրից դրամական ներհոսքերն առավել դինամիկ ու մեծածավալ են, ինչը առաջացնում է ոչ միայն փողի զանգված է, այլ նաև արտարժույթային և դրամավարկային քաղաքականությունների փոփոխություն ու պարբերական ճշգրտումներ:

Հայաստանում, մինչև 2025 թվականը արտերկրից ստացված տրանսֆերտների մասով ֆիզիկական անձանց մոտ հարկային հետևանքներ չէր առաջանում, սակայն ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման ինստիտուտի ներդրումն ու հսկողությունն ինքնին ստեղծում են դրամական ներհոսքերի հետևանքների համար ֆիսկալ քաղաքականության փոփոխություն՝ և՛ կապված վերահսկողական, և՛ հարկային մուտքերի ծավալների, և՛ տնտեսության մեջ հարկերի հավաքագրման ու հետևանքների հետ:

Այս համատեքստում կարող է թեման որակվել արդիական, հատկապես վերը նշված նոր ազդեցությունների առկայության պարագայում: Հաշվի առնելով, որ երկրի ներսում դրամական փոխանցումների մասով ուսումնասիրություններ են իրականացնում և՛ ՀՀ Կենտրոնական բանկը, և՛ ՀՀ Վիճակագրական կոմիտեն: Այն հանգամանքը, որ ֆիզիկական անձանց հայտարարագրումը նոր իրողություն է լինելու ֆիզիկական անձանց թե՛ պասիվ, և թե՛ ակտիվ եկամուտների հարկման ազդեցությամբ ֆիսկալ քաղաքականության վրա, խնդիրն է եղել, ուսումնասիրել ՀՀ-ում դրամական փոխանցումները և դրա ազդեցությունը տնտեսության վրա:

Այդ համատեքստում կատարված ուսումնասիրության արդյունքում եզրահանգվել է, որ Հայաստանի փողային փոխանցումները, չնայած 2005 թվականի ու 2024 թվականի ցուցանիշների միջև գրանցվել է դրական դինամիկա, սակայն վերջին տաս տարիներին հինգ տարվա պարբերականությամբ նվազել է: Նշվածով պայմանավորված, որպես գիտական նորույթ, առաջարկվել է Հայաստանում «Բաց Բանկի» և «Բաց Ֆինանսների» կիրառումը, նորագույն տեխնոլոգիաներով, դրամական կամ փողային փոխակերպումներով վճարումների կատարումը՝ Ethereum, Bitcoin և այլն:

Բանալի բառեր. «Բաց Բանկի», «Բաց Ֆինանսների», Ethereum, Bitcoin, ՀՀ ԿԲ, դրամական փոխանցումներ, արտագնա աշխատանքներ, միջազգային վճարումներ, սեզոնային աշխատանք, տրանսֆերտներ:

ДИНАМИКА ДЕНЕЖНЫХ ПЕРЕВОДОВ И ИХ ВЛИЯНИЕ НА ЭКОНОМИКУ НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АРШАК ВАРЖАПЕТЯН

Аннотация

Денежные переводы охватывают не только внутренние транзакции, но и трансграничные финансовые потоки в обоих направлениях. Страны, граждане которых находятся в активной трудовой миграции и эмиграционных потоках, как правило, получают более динамичные и крупномасштабные денежные переводы из-за рубежа. Это приводит не только к увеличению денежной массы, но и к изменениям и периодической корректировке валютной и денежно-кредитной политики.

В Армении до 2025 года денежные переводы из-за рубежа не имели налоговых последствий для физических лиц. Однако внедрение и контроль института декларирования доходов физических лиц привели к изменениям в фискальной политике в отношении денежных потоков. Эти изменения касаются как механизмов контроля, так и объемов налоговых поступлений, а также эффективности сбора налогов в экономике. В связи с этим исследование данного вопроса представляется актуальным, особенно с учетом новых фискальных факторов.

В этом контексте тема может считаться актуальной, особенно с учётом вышеупомянутых новых факторов воздействия. Учитывая, что как Центральный банк Армении, так и Статистический комитет Армении проводят исследования в сфере внутренних денежных переводов, тот факт, что декларирование доходов физическими лицами станет новой реальностью — с влиянием на фискальную политику через налогообложение как пассивных, так и активных доходов — делает важным изучение денежных переводов в Армении и их влияния на экономику.

В рамках данного исследования была поставлена цель — проанализировать денежные переводы в Армении и их влияние на экономику. В результате исследования установлено, что, несмотря на положительную динамику денежных переводов в период между 2005 и 2024 годами, за последние десять лет наблюдается их снижение с периодичностью раз в пять лет.

Научной новизной данного исследования является предложение внедрения в Армении концепций «Открытый банкинг» (Open Banking) и «Открытые финансы» (Open Finance) с использованием новейших финансовых технологий, позволяющих осуществлять денежные переводы и платежи через цифровые активы, такие как Ethereum, Bitcoin и другие.

Ключевые слова: "Открытого Банка", "Открытых Финансов", Ethereum, Bitcoin, Центральный банк Республики Армения, Денежные переводы, Трудовая миграция / Работа за границей, Международные платежи, Сезонная работа, Трансферты / Денежные переводы

THE DYNAMICS OF MONEY TRANSFERS AND THEIR IMPACT ON THE ECONOMY: THE CASE OF RA

ARSHAK VARZHAPETYAN

Abstract

Monetary transfers pertain not only to domestic transactions within a country but also to cross-border inflows and outflows. In countries with significant levels of labor migration and emigration, remittance inflows from abroad tend to be more dynamic and large-scale. These flows influence not only the domestic money supply but also lead to adjustments in foreign exchange and monetary policy frameworks.

In Armenia, until 2025, remittances received from abroad by individuals did not generate tax consequences. However, the introduction and oversight of the personal income declaration system have initiated a shift in fiscal policy regarding monetary inflows, particularly in terms of regulatory measures, tax revenue volumes, and the broader implications for tax collection within the economy. Within this context, the topic is considered highly **relevant**, especially in light of the aforementioned emerging influences.

Both the Central Bank of Armenia and the Statistical Committee of the Republic of Armenia conduct studies on domestic monetary transfers. The recent introduction of personal income declarations represents a new policy development with potential effects on fiscal policy, as it applies to both passive and active income sources of individuals. **The core research objective** has thus been to examine the nature and economic impact of monetary transfers in Armenia.

The findings of the study suggest that although there has been positive growth in Armenia's monetary transfers between 2005 and 2024, there has been a noticeable decline in a five-year cycle over the past decade. In response, as a scientific novelty, the study proposes the implementation of "Open Banking" and "Open Finance" models in Armenia. These models would facilitate monetary transactions using modern technologies and alternative financial instruments such as Ethereum, Bitcoin, and other digital payment systems.

Keywords: "Open Banking", "Open Finance", Ethereum, Bitcoin, CBA, money transfers, overseas employment/migrant labor, international payments, seasonal employment, remittances.